

ՋԻԱԿՈՍՈ ԳՈՐԴԻՆԻ ՊԻԵՏՐՈ ՔՈՒԶՈՒԿՅԱՆ

Ջիակոմո Գորրինին հայերի ամենաչերմեռանդ բարեկամներից մեկն էր։ Նա ծնվել է 1859թ. Ալեքսանդրիայում։ Հաճախել է Բիելլայի բարձրագույն դպրոցները։ 1882թ., 23 տարեկան հասակում ավարտում է Միլանի համալսարանի լեզվաբանության և փիլիսոփայության ֆակուլտետը, ապա՝ Բիելլայի վարժարանում նշանակվում արդի պատմության դասախոս և արժանանում Ֆլորենցիայի Բարձրագույն կրթության ինստիտուտում կատարելագործման դպրոցի համար նշանակված կրթաթոշակին։ 1885թ., որպես Հանրային կրթության նախարարության մրցույթի հաղթող, նա ուղարկվեց Բեռլին՝ կատարելագործման դասընթացներին մասնակցելու։ Վերադառնալով՝ նշանակվում է արտգործնախարարության արխիվի տնօրեն, իսկ 1887թ. դառնում Փարիզի Դիվանագիտական պատմության ընկերության անդամ։ 1892թ., Նեապոլի համալսարանում ստանալով իր երկրորդ բարձրագույն կրթությունը՝ իրավագիտությունից, նա դարձավ Ֆլորենցիայի Բարձրագույն կրթության ինստիտուտի արդի պատմության ամբիոնի ազատ դոցենտ, իսկ 1900 թվականից նրան նույն դերը տրվեց նաև Հռոմի համալսարանում։ Ջիակոմո Գորրինին նաև Իտալիայի Աշխարհագրական ընկերության ղեկավար խորհրդի անդամ էր, իսկ 1907 թվականից նա դարձավ նախարարության արխիվների տնօրեն։

1909թ. Ջիակոմո Գորրինին արժանացավ իտալական Թագի հրամանատարի շքանշանին։ Նույն թվականին գլխավոր հյուպատոսի լիազորություններով նա սկսեց ղեկավարել Տրապիզոնի հյուպատոսությունը։

1887թ. Ջիակոմո Գորրինիի գրած չափազանց կարևոր տեղեկագիրը նրան դարձրեց անփոխարինելի՝ արտգործնախարարության արխիվի կազմակերպման գործում։ Իրականում Գորրինին է Իտալիայի արտգործնախարարության արխիվի հիմնադիրը, քանի որ հենց նա իրականացրեց կառավարության ծրագիրը՝ ստեղծել ինքնուրույն կենտրոնական մի արխիվ, որը պետք է հավաքեր նախարարության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերը և, փաստորեն, ստանձներ դիվանագիտական գործի պատմական հիշողության դերը։

Իտալական դիվանագիտության համար չափազանց կարևոր այդ ծրագրի գործնական իրականացումը երկար և դժվարին գործ էր: Մինչ այդ հիշյալ արխիվը ենթարկվում էր Թագավորության կենտրոնական արխիվին (դրան էին ենթարկվում բոլոր պետական և ոչ պետական, հանրային և մասնավոր արխիվները): Արտգործնախարարության արխիվ ունենալու անհրաժեշտությունը ծնվեց իտալական արտաքին քաղաքականության զարգացմանը զուգընթաց: Գործինին հասկացել էր, որ եթե Իտալիան ցանկանում է հաստատվել եվրոպական և միջերկրական դաշտում, ապա կարիք ունի ստեղծելու արտաքին քաղաքականության անկախ արխիվ: Ջիակոմո Գործինիի համար, արխիվի տարբեր ենթաբաժիններից՝ «Դպրոցներն արտերկրում», «Փախստականություն», «Հարաբերություններ», «Անձնագրեր» և այլն, ամենակարևորը «Քաղաքական գործեր» ենթաբաժինն էր, որի կազմակերպումը հաստատուն ընթացք ստացավ 1891 թվականից:

Գործինին բյուրոկրատ չէր, և իր նպատակը լոկ կարգ ու կանոն հաստատելը չէր, այլ նաև՝ արխիվի գիտական կազմակերպումը, որպեսզի այն ծառայի պետությանը, լինի միջազգային քաղաքականության, դիվանագիտության մի լաբորատորիա:

«Կատալոգի» 60 համարի տակ Հայաստանն է, որը բաժանված լինելով ութ արխիվային թղթապանակների, ընդգրկում է 1891-1914թթ. քաղաքական բնույթի բոլոր փաստաթղթերը: Այդ նյութերը տալիս են ժամանակներում գալիս էին տարբեր տեղերից: 1891-1893թթ. փաստաթղթերը գալիս էին Արևելյան Անատոլիայի, Էրզրումի հյուպատոսական գործակալության և Տրապիզոնի հյուպատոսության դիվանագիտական ուղիներով, իսկ հաջորդ ժամանակաշրջանի փաստաթղթերը՝ տարբեր վայրերից: Սա հավաստում է, թե ինչ մեծ հետաքրքրություն է ունեցել իտալական դիվանագիտությունը «հայկական խնդիրների» նկատմամբ 1894-1896թթ. ընթացքում (որը, ամենայն հավանականությամբ, Օսմանյան կայսրության սրտում՝ Անատոլիայում, Իտալիայի կողմից կարևոր դեր ստանձնելու՝ Կրիսպիի որոշման արդյունքն էր):

Ջիակոմո Գործինին, որ 1911-1915թթ. Տրապիզոնում Իտալիայի գլխավոր հյուպատոսն էր և որի իրավասությունների շրջանակն առնվում էր Թուրքահայաստանի Էրզրում, Վան, Բիթլիս, Սվազ և Մամսուն վիլայեթներին, փաստորեն, հայկական կոտորածների ականատեսը դարձավ: (Ի դեպ՝ այդ ժամանակ նա հետաքրքրված էր նաև իր իրավասության տակ գտնվող շրջանների տնտեսական ներուժով և շատ գործեր է հրատարակել Տրապիզոնի, Սվազի, Վանի և մամսունի արտադրական տարբեր բնագավառների մասին:)

Առաջին համաշխարհայինը և Թուրքիայի դեմ Իտալիայի մուտքը պատերազմ ստիպեցին Գործինիին թողնելու Տրապիզոնը և 1915թ. վերադառնալ Իտալիա: Հռոմի «Մեսսաջջերո» օրաթերթին տված հարցազրույցում հյուպատոս Ջիակոմո Գործինին նկարագրում է հայ ժողովրդին վիճակված ողբերգությունը: Հարցազրույցը տպագրվեց «Հայերի դեմ մուսուլմանական վայրագությունների սահմուկեցուցիչ դրվագներ» վերնագրով: Ահա այդ հարցազրույցից մի պարբերություն.

«Տարբեր վիլայեթներում հայերը տարբեր ձևերով էին խոշտանգվում:

Նրանք ամենուր կասկածվում ու հետապնդվում էին, ենթարկվում էին իսկական սպանդի, որն ավելի դաժան է քան կոտորածը: Հայկական այն վիրայեթներում, որոնցից հինգը՝ Տրապիզոնը, Էրզրումը, Վանը, Բիթլիսը և Սվազը, դժբախտաբար իմ հյուպատոսական իրավասության տակ էին գտնվում.. սկսած հունիսի 24-ից բոլոր հայերը տեղահանվեցին, այսինքն բռնի ուժով դուրս էին տարվում իրենց բնակավայրերից և զինվորականների ուղեկցությամբ բռնվեցին հեռու վայրեր. նրանցից քչերն էին հասնելու Միջագետքի խորքերը»: Այս հարցազրույցը, որն ականատես դիվանագետի վկայությունն է, մեծ արժեք ունի:

Հետաքրքիր մի փաստ. 1917թ. ապրիլի 4-ին, երբ Ռուսաստանը, որ Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի հետ դաշինքում էր, գրավել էր Անատոլիայի քաղաքներն ու հայկական վիլայեթները, Ռուսաստանում Իտալիայի դեսպանը Պետերբուրգից մի հեռագիր է ուղարկում Իտալիայի արտգործնախարարին: Այդ հեռագրում Տրապիզոնի կարևորությունը Հայաստանի և հարավում առևտրական նկատառումներով Իտալիայի համար ընդգծելով հանդերձ, դեսպանը խնդրում է, որպեսզի Ջիակուն Գորրինին դեսպան նշանակվի ապագա Հայաստանի հանրապետությունում: Սակայն շուտով ռուսական զորքերը սկսեցին նահանջել Էրզրումից. կոմունիստական հեղափոխությունը ծավալվում էր Ռուսաստանում, և զինվորները թողնում էին մարտադաշտը:

Գերմանիայի, Ավստրիայի, Հունգարիայի և Թուրքիայի պարտությանը պատերազմի ավարտին Ջիակուն Գորրինին Հայաստանի մասին մի գործ պատրաստելու հանձնարարություն ստացավ: 1918թ. նոյեմբերի 14-ին նա սեղանին դրեց հանրահայտ «Հուշագիրը», որը ներկայացվեց Խաղաղության կոնգրեսին. այն հավանության արժանացավ նաև Փարիզի Հայկական ազգային պատվիրակության կողմից և որպես հիմք ծառայեց Սերի, Ժնևի և Լոզանի քննարկումների համար:

Նույն տարում՝ 1918թ., Ջիակուն Գորրինին նշանակվեց Թագավորական լիազոր նախարար, ավելի ճիշտ՝ Իտալիայի դեսպան Հայաստանի հանրապետությունում (նստավայրը՝ Երևան): Գորրինին էր լինելու նաև ոչ միայն Իտալիայի, այլև հաղթող բոլոր տերությունների առաջին և միակ պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանի նորաստեղծ հանրապետությունում, և այդքանով իսկ՝ մինչև 1922թ. հայկական իրադարձությունների ականատեսը: Գորրինին այսպես է նկարագրում նոր պետության ծնունդը.

«1918թ. մայիսի 26-ի Անդրֆեդերացիայի տրոհումով՝ հետևաբար Անդրկովկասյան Հանրապետության՝ Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, մասնատումով, 1918թ. մայիսի 28-ին անկախության հռչակագրից հետո Երևանում ձևավորվեց Անկախ և Միացյալ Հայաստանի, որ անվանվում էր նաև Արարատի Հայաստանի հանրապետությունը: Կառավարությունը ղեկավարում էր փորձառու Ալեքսանդր Խատիսյանը, որը [նախկինում] քաղաքապետն էր Թիֆլիսի. վերջինս Կովկասի և Վրաստանի մայրաքաղաքն էր, բայց բնակեցված էր հիմնականում հայերով, որոնք էլ քաղաքին առավել բարձր արժեք էին տալիս»:

Ի դեպ՝ այդ նույն ժամանակ Հոռմում էր գտնվում նաև Միքայել Վարդանյանը՝ Հայաստանի Անկախ հանրապետության դեսպանը, որ

շարունակեց իր պարտականությունները մինչև 1923թ.:

1918-1922թ. Անդրկովկասում ապրող մի կրթյալ հայի հոգվածում, որ այդ շրջանում գտնվում էր Հայաստանում, կարդում ենք.

«Իտալիայի հանդեպ հայ ժողովրդի համակրանքն օր-օրի ավելանում էր Հայաստանի հանրապետությունում իտալական նոր ներկայացուցչության դեսպան Ջիակոմո Գորրինիի բարեկամական վերաբերմունքի շնորհիվ: Գորրինին Հայաստանի հանրապետությունում հավաստարմագրված այն լիազոր նախարարն էր, որ ոչ նախորդ ուներ, ոչ հաջորդ: Ճիշտ է՝ Թիֆլիս էր ուղարկվել և այնտեղ բավական երկար մնացել իտալական մի զինվորական առաքելություն՝ հրամանատար Մեքիադե Գաբբայի զխավորությամբ, որին սիրալիրաբար ընդունեցին և զնահատեցին, ճիշտ է նաև այն, որ Տարոնտոյում ձևավորվեց իտալական մի զինջոկատ, որը՝ Փարիզի Խաղաղության կոնֆերանսի համաձայնությամբ պատրաստ էր նավարկել Կովկաս, սակայն Ֆրանչեսկո Սավերիո Նիտտիի անհասկանալի ետ կանգնման արդյունքում անմիջապես ցրվեց:

Երբ տարածվեց այն լուրը, որ Կովկասի պաշտպանության համար ֆրանս-անգլիական զորքերի կողքին են լինելու նաև իտալական զորաջոկատները, հայերը մտովի ետ գնացին պատմական այն ժամանակները. երբ Հայաստանը դարեր շարունակ քաղաքականապես և ռազմականապես դաշնակցում էր Հոմին: Այս ծրագիրը սակայն չիրագործվեց իրադարձությունների կտրուկ շրջադարձի պատճառով»:

Երբ Գորրինին իր հուշագիրն էր ներկայացրել Փարիզի վեհաժողովին, Թուրքիան, ինչպես հայտնի է, պատերազմում պարտություն էր կրել: Օսմանյան կայսրությունը զրեթե գոյություն չուներ: Անասուլիան դարձել էր մի տարածք, որ չէր պատկանում ոչ մեկին: Մուստաֆա Բեմալի բանակի կողմից այդ տարածքների վեղանվաճումից և արևմուտքի՝ քեմալական հեղափոխության ջատագովների աջակցությամբ ու մեղսակցությամբ, հույների տեղահանումից և հայերի վերջնական բնաջնջումից հետո, Վերսալի պայմանագիրը չիրագործվեց, իսկ 1923թ. Լոզանի պայմանագրում Հայկական հարցի հետքն անգամ չկար:

Գորրինին Իտալիա վերադարձավ մի վերապրած հայ կնոջ հետ, որը մինչև կյանքի վերջը մնաց նրա կենաց ուղեկիցը:

1940թ. հրատարակիչ Լաուրո Մայնարդին Ջիակոմո Գորրինիին առաջարկեց 1918թ. հռչակված Հայաստանի հանրապետության 21-րդ տարեկիցի առթիվ տպագրել Հայաստանի մասին գրած իր գործը: Գորրինին ընդունեց առաջարկը: Նպատակն այն էր, որ Հայկական հարցը բարձրացվի այն ժամանակ, երբ դրա համար պատեհ առիթ կլինի, եթե աշխարհաքաղաքական նոր վայրիվերումների արդյունքում Թուրքիան մտնի պատերազմի մեջ: Երկրորդ համաշխարհայինի նախաշեմին հայերը դարձյալ կարող էին հուսալ, որ կվերադառնան և կտիրեն իրենց հողերին: Գորրինին գրում է.

«Հայկական հարցը մահացած չէ: Ավելին, այն բարձրանում ու կենդանի է մնում, քանզի միջազգային արդարությունը հավատում է, որ այն կյուծվի, երբ հաստատվի մի կայուն Հայրենիք, որը ցամաքային ու ծովային այնպիսի լավ դասավորված սահմաններ կունենա, որ հեշտ լինի պաշտ-

պանվելը հնարավոր արտաքին նոր սպառնալիքներից, արհավիրքներից և ավերածություններից:

Հուսով եմ, որ բաղձալի այդ իրադարձությունը վաղ թե ուշ կկատարվի. սրտանց մաղթում եմ դա և հուսով եմ, որ դրան մեծապես կարող է աջակցել մեր հուսալիան:

Գործինին սա գրում էր 1940թ., երբ աշխարհը պատերազմի արհավիրքներն էր կրում: Նա որոշել էր վերջ դնել այն բանին, որ անվանում էր «տարիների խղճահար լուրջություն» և դա անելով՝ հավաստում, որ ցեղասպանության զոհերի հիշատակը շարունակվում է մնալ մեծ մարդասերների ուշադրության կենտրոնում: Դա ժամանակի հրամայականն էր, ի շարունակություն այն կոչերի, որ արել էին Անատոլ Ֆրանսը, Արմին Վեգները, Ֆրիտյոֆ Նանսենը: Այն հնչում էր որպես անհրաժեշտություն, մինչև հայերին կերաշխավորվեր մի «կայուն հայրենիք», մաս խթան էր գիտակցելու, որ միջազգային արդարությունը վաղ թե ուշ հանգելու է դրան: Դա, փաստորեն, 1998թ. Հռոմի Ժողովուրդների իրավունքների մշտական դատարանի նախանշանն էր:

1923թ. հունվարի 21-ին Զիականոն Գործինին լիզոր նախարարի աստիճանով անցավ հանգստի, վերջնականապես հաստատվեց Հռոմում, ուր 1950թ. հոկտեմբերի 31-ին կնքեց իր մահկանացուն 91 տարեկան հասակում. մինչև վերջին պահը նրա կողքին էր, նրան խնամում էր նրա հայազգի կենաց ուղեկիցը:

2001թ. Վոզնեսյայի գերեզմանատանը գտնվող նրա շիրիմից մի բուռ հող բերվեց Երևան, որն ամփոփվեց Ծիծեռնակաբերդի՝ ցեղասպանության զոհերի հուշարձանի պատվո հուշապատի մեջ: Դրանով հայ ժողովուրդն իր հարգանքի ու երախտագիտության տուրքն էր մատուցում մեծ մարդասերին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՏՎԱԾ 1915Թ. ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ ԻՏԱԼԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍ
ԶԻԱԿՈՍՏ ԳՈՐԹԻՆԻԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՑ

*Հարցազրույցը տպագրվել է իտալական «Մեսսագջերո» թերթի 1915 թվականի սպտտոսի 27-ի և 28-ի համարներում և վերաբերվում է Օսմանյան կայսրության ներքին իրավիճակին: Հարցազրույցի վերջում հյուպատոսն անդրադառնում է նաև հայերի դեմ իրականացվող բռնություններին: Այս հատվածն արտատպվել է նաև Թուրքիում 1915-1918 թվականներին լույս տեսնող «Արմենիա» ամսօրեայի 1915 թվականի հոկտեմբերի 15-ի համա-
րում:*

Լրագրող - Վերջում խնդրում եմ բարի եղեք պարզաբանել, թե որքանով են իրականությանը համապատասխանում Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացվող հալածանքներին վերաբերվող հրապարակումները:

Գործընկի - Տարբեր վիլայեթներում հայերը խոշտանգվում էին տարբեր ձևերով: Ամենուր նրանք հետապնդվում ու կասկածվում էին: Նրանք ենթարկվում էին իսկական սպանդի, որն ավելի դաժան է քան կոտորածը: Այսպես ասած հայկական վիլայեթներից (7 վիլայեթ) հինգը՝ ամենակարևորներն ու մարդաշատը, դժբախտաբար հենց իմ հյուպատոսական իրավասության տակ էին գտնվում՝ Տրապիզոնը, Էյլադունը, Վանը, Բիթլիսը և Սիվազը: Իմ տարածքներում, սկսած հունիսի 24-ից, բոլոր հայերը սկսեցին տեղահանվել՝ այսինքն բռնի ուժով դուրս էին տարվում իրենց բնակավայրերից և զինվորականների կողմից ուղեկցվում՝ դեպի հետավոր վայրեր: Նրանցից միայն քչերն էին հասնում Միջագետք, իսկ մեծ մասը սպանվում էր չլսված դաժանությամբ:

Պաշտոնական հրահանգը գալիս է հենց Կ. Պոլսից՝ սա կենտրոնական իշխանության և «Միություն և առաջադիմություն» կուսակցության գործն է: Տեղական իշխանությունները և նույնիսկ մուսուլմանական բնակչությունը փորձում էին դիմադրել, մեղմացնել, ազատել, թաքցնել հայերին, սակայն ամեն ինչ ապարդյուն էր: Կենտրոնական իշխանության հրամանները կտրականապես հաստատված էին, և բոլորը պետք է ենթարկվեին ու հետևեին լրանց:

Մեր հյուպատոսական միջոցառությունը փորձեց փրկել գոնե երեխաներին և կանանց, և չնայած ստացված բազմաթիվ խոստումներին դրանք չէին հարգվում «Միություն և առաջադիմություն» կուսակցության տեղական մարմինների կողմից, քանի որ հարամանները գալիս էին Կ. Պոլսից: Իրականացվում է ամենդ բնակչության իսկական կոտորած և մորթ: Սա մի շլված քան է, մի սև էջ, բացահայտ հալածանք մարդկային սրբազան օրենքների, քրիստոնեության և ազգային պատկանելիության համդեպ: Նույնիսկ հայ կաթոլիկները, որ նախկինում միշտ հարգված էին և զերծ էին մնում հալածանքներից ու կոտորածներից, այս անգամ, դարձյալ կենտրոնի հրամաններով, հալածվում են ամենադաժան ձևերով:

Տրապիզոնում բնակվող լուսավորչական, կաթոլիկ և բողոքական շուրջ 14000 հայերից, որոնք երբևէ չեն հրաիրել անօրինություններ, երբեք չեն մախազուշացվել ոստիկանության կողմից, իմ մեկնելու ժամանակ մնացել էին 100-ից ոչ ավելի: Հունիսի 24-ից՝ այդ խայտառակ հրամանագրի հրապարակման օրից մինչև հուլիսի 23-ը՝ Տրապիզոնից իմ հեռանալու օրը, ես չէի քնում, չէի ուտում, գտնվում էի նյարդային համակարգի կաթվածախար վիճակում: Դա մի իսկական տանջանք էր՝ ներկա գտնվել անզեն և ամենդ արարածների մասսայական բնաջնջանքի:

Հայերի խմբերն անցնում էին հյուպատոսության պատուհանների տակով՝ աղերսելով օգնություն, բայց ո՛չ ես, ո՛չ մյուսները ոչինչ չէինք կարող անել նրանց

համար: Քաղաքը պաշարված էր մինչև ատամները զինված 15000 զինվորներով, ոստիկանության հազարավոր աշխատակիցներով, կամավորների բանդաներով և «Միություն և առաջադիմություն» կուսակցության հատուկ ջոկատներով: Արցունքներ, կսկիծներ, անեծքներ, բազմաթիվ սպանություններ, խելագարվածներ, վախից մեռնողներ, հրդեհներ, կրակոցներ, անգութ հալածանքներ, յուրաքանչյուր օր փողոցներում հարյուրավոր դիակներ, բռնի ուժով մուսուլմանացված կանայք, քրիստոնեական ընտանիքներից ու դպրոցներից գողացված ու բռնի ուժով մուսուլմանական ընտանիքներին հանձնված երեխաներ, շատերն էլ միայն մի շապիկով մատեցվում էին նավակների մեջ ու խեղդամահ արվում Սև ծովում կամ Դերե Մենդերե գետում: Ահա սրանք են Տրապիզոնից իմ վերջին, անջնջելի հիշողությունները, որ տանջում ու խռովում են հոգիս:

Թույլ տվեք այսքանով եզրափակել իմ այս գրույցը և հայտարարել, որ Թուրքիայի այս սև էջը ենթակա է վճռական դատապարտության: Եթե իմանային այն ամենը, ինչ ես գիտեմ, այն ամենը, ինչ տեսել եմ իմ աչքերով ու լսել իմ ականջներով, քրիստոնեական այն բոլոր պետությունները, որոնք մինչ այժմ չեզոք դիրքում են, պետք է ելնեն Թուրքիայի դեմ, դատապարտեն նրա ոչ քաղաքակիրթ իշխանությանը, նրա վայրագ «Միություն և առաջադիմություն» կուսակցությանը և պատասխանատու համարեն նրա դաշնակիցներին, որոնք հանդուրժում և իրենց օգնությամբ թաքցնում են այն անավոր ոճրագործությունը, որը համարժեք չունի ո՛չ հին, ո՛չ էլ նոր պատմության մեջ:

Անպատվություն, սարսափ, անարգանք:

Թարգմանությունը՝
Արամայիս Բալոյանի